

**ԳԱՐՆԻԿ ԱՆԱՆՅԱՆ**  
Բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

## ԱՂԱՇԵՎՈՐՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐԸ Վ ԴԱՐՈՒՄ

Հայ միջնադարին հայտնի մի քանի տասնյակ աղանդեր տարբերվում են ոչ միայն իրենց ծագման հանգամանքներով, այլև հետապնդած նպատակներով, որոնք հիմնականում ունեցել են քաղաքական և սոցիալական բնույթը: Եթե Պավլիկյան և Թոնդրակյան աղանդերն ընդգծված սոցիալական ուղղվածություն ունեին և ներկայանում էին իրեն անհավասարության ու զանգվածային թշվառության դեմ ժողովրդական զանգվածների դժգոհություն, ապա նետորականությունը, ավելի ուշ ունիթոսությունը և համանման ուղիներ, պարզապես ժամանակի հզոր պետությունների որդեգրած ու պարտադրած հերձվածեր և դավանական շարժումներ են՝ այլ ժողովուրդների նկատմամբ նվաճողական քաղաքականությունը քողարկված հրականացնելու հետահար նպատակներով:

Եթե մովսը չեն նրանց բոլորի առաջ գալու պատճառներն ու նպատակները, տարբեր պետք է լինեն մոտեցումներն ու գնահատումները ևս:

Հստ երկութին ուշահրության պետք է առնել նաև այն կոնկրետ ժամանակահատվածը, որում գործել է տվյալ աղանդը: Ժողովրդի և պետության համար ճակատագրական պահերին, երբ փրկության հետանկարը բոլոր ուժերի հավաքական միասնություն է ենթադրել, ցանկացած բնույթի երկարակություն ենթակա է դատապարտության:

Վ դարի առաջին կեսը, որին, ըստ մատենագիրների, հատուկ է մի քանի աղանդների ներթափանցում հայկական իրականություն, բնութագրվում է հայոց կործանվող պետականությունը փրկելու գերագույն ճիգերով, և ցանկացած բնույթի աղանդ ու երկարակություն, անկախ հետապնդած նպատակներից, շլատում էր միասնությունը՝ բարենպատապ պայմաններ ստեղծելով կործանարար զարգացումների համար:

Աղանդների ձևավորման և նրանց դեմ պայքարը արձանագրված է արդեն իսկ Աստվածաշնչում:

Համընդհանուր ճանաչման ճանապարհը քրիստոնեությունն անցնում էր ոչ միայն գոյություն ունեցող կրոնների հաղթահարմամբ, այլև իր իսկ ներսում ծնունդ առնող՝ աստվածաշնչյան զանազան այլնմթերցումները մերժելու նույնքան դժվարին պայքարում: Նոր կտակարանում քրիստոնեական տարբեր համայնքներում առաջ եկող որոշ խմբումների մասին եղած հիշատակումները հաստատումն են այն իրողության, որ վերջիններս առաջացել են նոր վարդապետության ձևավորմանը զուգահեռ: Փոքր թիվ չեն կազմել նրանք, ովքեր «ողջմատութեան վարդապետութեանն ոչ անայցեն» (Բ Տիմոթ. Դ 3): Մի ուրիշ խումբ են սուս մարգարեները, որոնք աշխարհը բացատրում են «ոչ ըստ Թիոսի Քրիստոսի» (Կողոս. Բ 8): Սա ուղական էր նաև անտիկ աշխարհի ու հեթանոսության դեմ, որոնք աշխարհը ճանաչում են «ըստ մարդկան աւանդութեան և ըստ տարերց աշխարհի»:

Հիսուս ասում էր, որ հայտնվելու են սուս քրիստոսներ, որոնք մոլորեցնելու են շատերին. «Բազումք եկեսցեն յանուն իմ, և ասիցեն թէ ես եմ Քրիստոսն, և զբաղում մոլորեցուցեն» (Մարկ. Ժ 5-6): Հերձվածողների մեծաքանակ լինելու վերաբերյալ ևս վկայված է Աստվածաշնչում: Քրիստոսի հավաստումը, թե իբրև քրիստոսներ ներկայացողները բազում մոլորյալ հետևորդներ կունենան, այլ վկայություններով ևս հաստատվում է. «Եւ թաճ նոցա իբրև զբաղցելու ճարակ գտամեն» (Բ Տիմոթ. Բ 17):

Աստծո Որդին աշակերտներին ու հավատացյալներին գգուշացնում է ոչ միայն հերձվածներից, այլև նրանցից, ովքեր «սիրեն ողջոյն ի հրապարակս», «զբարձերէցս լընթրիս» և «պատճառանօք յերկարեն զաղօթս» (Ղուկ. Ի 46-47): Այս փարիսեցների կողքին, որոնց պատիժն առավել խիստ է լինելու, հիշկում են նաև նրանք, ովքեր «կամին լինել վարդապետք օրինաց, ինքեանք ոչ իմանան զինչ խօսին, և ոչ վասն որոց պնդեալն են» (Ա. Տիմոթ. Ա. 7): Այլպիսիները եթե չմոլորեցնեն էլ, կվանեն հավատացյալներին:

Աստվածաշումը պատկերացում է տալիս աղանդների դեմ պայքարելու եղանակների մասին ևս: Տիտոսին հղած թղթում Պողոս առաքյալը հայտարարում է. «Յառնէ հերձուածողէ, յևս միանգամ և երկիցս խրատելոյ, հրամարեաչիր» (Տիտոս Գ. 10): Նույն թղթում այդպիսիների համար ավելի ծանր պատիժներ էլ է սահմանում «ըմբերանել» (Ա. 11): Արդեն իսկ առաքյալների գործունեության շրջանում մեծ թիվ են կազմել սուս մարգարեները, որոնք գգալի թվով էլ հետևորդներ են ունեցել, այլապես Պետրոսն իր երկրորդ թղթում չեր գրի. «Լիմէին և սուս մարգարէ ի ժողովրդեանն, որպէս և այժմ ի ձեզ լիմիցին սուս վարդապետք» (Բ 1): Նույն տեղում հայտնի է դառնում նաև, որ «բազումք անկեալ երթիցնեն զիւս նոցա անառակութեանցն» (Բ 2):

Ինչո՞ւ են արտահայտվել հերձվածները, Աստվածաշումը չի մանրամասնում, տեղեկությունները կցկոտոր են: Հույսա առաքյալի թղթում, օրինակ, ընդհանուր հիշվում է, թե «զԱստուծոյ մերոյ շնորհսն դարձուցին յանկարգութիւն» և ուրանում են «զՏէր մեր Յիսոս Քրիստոս» (4): Որոշ մանրամասներ, առաջին հերձվածների առաջնորդների անուններ, այնուամենալցիկ, Սուրբ Գիրքը հասցնում է մեզ: Իր ումանակներին հորդորելով հրամարվել «ի պղծոց և ի սնոտի խօսից», Պողոս առաքյալը Տիմոթեոսին հղած երկրորդ թղթում հիշում է սնոտի խոսքերի հետինականերից երկուսին՝ Հիմենոսին և Փիլիստոսին, որոնք մերժում են հարության ճշմարիտ վարդապետությունը: Սրանք «վրիպեցան ի ճշմարտութեալն, և ասեն եթէ յարութիւն մեռելոց արդէն իսկ եղեալ է» (Բ 18):

Այս հերձվածողները տեղի չեն տվել, ինչն սկզբից անհաջող պայքար է եղել ճշմարիտ և սուս մարգարեների միջև: Նույն թղթում Պողոսը խոստովանում է. «Աղէքսանդրոս բազում չաշշարան եցոյց ինձ» (Դ 14): «Ռիվական վարդապետությունների» անունները չեն տրվում, պարզապես հիշվում են դրանց պահանջները: Ահա մի նմուշ. «Որ արգելուցուն յամուսնամալոյ, եւ մեկնիցն ի կերակրոց զոր Աստուած հաստատեաց ի վայելել հատացելոց» (Ա. Տիմոթ. Դ 3):

Ոչ պակաս կարևոր են հիշատակումներն այն միջոցների, որոնցով մոլորեցնում են հավատացյալներին: Դա արվում է պերճախոսությամբ, որն անհրաժեշտ էր դարձնում նոր վարդապետության քարոզիչների կողմից ճարտասանության լուրացումը, կեղծավորությամբ, ստախոսությամբ, «քաղցրաբանութեամբ պատրեն զիրտս անմե-

դանակաց» (Հոռմ. ԺԶ 18): Չարի արմատներից է նաև «արծաթսիրութիւնը»՝ «որում ոմանց ցանդացեալ՝ վրիհաեցան ի հաւատոցն» (Ա. Տիմոթ. Զ 10):

Աստվածաշունչը նաև ուսուցանում է փորձություններից խուսափելու ուղին. «Յամեն նանապարհն քո ծանիր զնա, զի ոսիդ արասցէ զճանապարհն քո, եւ ոտն քո մի՛ գայթակենսցի» (Առակը Գ 6):

Ողջ միշտարում շարունակ հնչելու էր պատվերը՝ չմոլորվելու աստվածաշնչյան «Մի լքանիր ի խրատու Տեառն» (Առակը Գ 11):

Հայ քրիստոնեական իրականությունը չէր կարող բացառություն լինել:

\* \* \*

Աղանդների պատմությունը հայտնաբերում է մի ուշագրավ օրինաչափություն. դրանք ծնվում են, անհետառում, մինչեղ առաքելական վարդապետությունը կա, մնում է, և վերջինիս երկնազարդայա պատմությունը իրավունք է տալիս ասել՝ լինելու է: Ընդհանուրը պատմության գիրկն անցած մի քանի տասնյակ թերձվածների համար Քրիստոսի վարդապետությունը կամ առանձին դոգմաներ նորովի մեկնարամներու «փորձն» է, որը, իբրև կանոն, փորձանք է դառնում բոլոր մրանց համար, ովքեր հետևում են «նոր» «փրկիչներին»: Պատմությունը հաստատում է նաև, որ աղանդները բուռն ծաղկում են ապրում մեծ թերաբեկումների շրջանում, երբ իշխող գաղափարախոսությունը հայտնվում է ճգնաժամում (եթե նույնիսկ չի փուզվում)՝ տեղ բացելով զանազան «մեկնությունների» համար:

Անցած ճանապարհի հետևություններից մեկն էլ այն է, որ հաճախ սոցիալական թշվառությունն է դուռ բացում մարդուրամների գործունեության առաջ. հավատացյալները «նորերի» ետևից գնում են ոչ այնքան «նոր» վարդապետության կասկածելի ճշմարտության, որքան մի կտոր հաց վաստակելու պարտադրանքով:

Մեր կյանքի վերջին տասնամյակն ասվածի լավագում վկայությունն է:

Հայտնի է, որ Հայաստանը տարածաշրջանի համար քրիստոնեական գաղափարախոսության հզոր կենտրոն էր: Դա պայմանավորված էր ոչ միայն քրիստոնեության պետական ճանաչման առաջնանությամբ, այլև այն մտավոր, հոգևոր-մշակութային ներուժով, որ ձևավորվեց մեզանում Գրիգոր Լուսավորչի եռանդուն գործունեությամբ, որը նոր թափստացավ գրերի գյուտից հետո: Մոտավոր և հեռավոր հարևանները զինակցության էին կոչում հայերին:

Ագաթանգեղոսին անվերապահ ընդունելու դեպքում պետք է հավատանք, թե քրիստոնեությունը պետական կրոն հոչակելը, մրա հետագա ծավալումն ընթացել են զարմանալի դյուրությամբ, առանց ցնցումների ու բախումների: Ագաթանգեղոսի մոտ խոսք չկա աղանդների ու հերձվածների մասին:

Իրականում վարդապետության տարածումը Հայաստանում լուրջ դիմադրության է համեմատել, վկան Փավստոս Բուզանդն է (մյուս պատմիշները ևս): Ոչ միայն այս, մեզանում առվաճական մուտք են գործել աղանդներ, որոնց դեմ, համեմայն նեպս, V դարում Եկեղեցին ճապատակային պայքար է կազմակերպել:

Հեշտ չեր այդ պալքարը: Աղանդները հաճախ հնաշեղ անունների էին աղերսվում, ունեին մեծ թվով հետևորդներ. «...Մի՛ խարեսցն զեզ բանք սպառիք, մի՛ նայիք ընդ պատուական պատուականութեան մարդկան, և մի՛ ընդ բազմութիւն որ միաբանիցին լինել ընդդէմ իրեանց կենարարին Քրիստոսի և ճշմարիտ հաւատոյ...»<sup>1</sup>: Առաջին երեք տիեզերական ժողովները, որոնց ընդունած կանոնների վրա է բարձրանում Հայ Առաքելական Եկեղեցու դավանանքը, անբեկաննեղի վճիռների են կայացրել աղանդների վերաբերյալ:

Աղանդների, նույնիսկ որևէ աղանդի տեսական հիմունքների վերաբերյալ ոչ մի գիրք չի պահպանվել: Հիմնական սկզբունքները (հարազատության աստիճանը Աստծուն է հայտնի), առանձին հատվածներ և սկզբունքներ հասել են մեզ մերժողների թղթերում, եղծերում, քարոզներում... Հերձվածողների հետ միասին հալածվել են նաև նրանց գրքերը: Վերջիններս հավաքելու և այրելու վերաբերյալ տիեզերական ժողովների որոշումներն իրագործվել են օրինակելի հետևողությամբ. «Որ խոտորեցան ի փառացն սրբութենէ և յուղին հաւատոց, նորով նորա յամենայն ժողովուրոց և այրեցան որ վասի խորհրդոց գիրք էին նոցա»<sup>2</sup>: Նոյնպիսի որոշում Եփեսոսի ժողովն էլ է ընդունել. «Ի մի վայր ժողովներ զբնաւ գրեան և այրել»<sup>3</sup>: Ակակը հայերին ևս հորդորում էր՝ «գրեալսն Դիոհորի կապեցէք կնքեցէք»<sup>4</sup>:

Տարակովս չի կարող լինել, որ Հայ Եկեղեցու հայրերը կատարել են այս պատվիրանները: Պրոկոփի աղատախան թղթում Սահակ Պարթևն ու Մեարու Մաշտոցը հավաստում են. «Եւ յամենայն տեղիս որ շուրջ զմերք բնակեալ էին, յեցաք մեծ և պատուիասալից պատուիրանաւ մի՛ լսել բնաւ ամենին զայդակիսի բարբարոս, մի՛ ընդունել ամենին զվասարեր կորստական մոլորական հերեսիութեանն վարդապետութիւնն»<sup>5</sup>: «Պատուիասալից պատուիրանաւ» էլ նոյն նամակում պարզվում է. ով նման բաներ խորին կամ խոսի «ոչ միայն չընդունիմք կամ հալածենք, այլ բազում և մեծամեծ պատիժ պատուիասի առնել ոչ դանարակիմք»<sup>6</sup>:

Պրոկոփի թղթից կարելի է կուսինել, որ այլադավանությունը նոր-մոր էր մոտոք գործում Հայատան. «զի լու եղեւ մեզ եթէ արք ոմանք ժանդախաւաք ցնորախաւաք, անկան ի յաշխարի այդք, և կամին ժանդառող իմն գրովք, բակառակութեամբ, ստարան խատախոր-հուրդ գիտութեամբ, խոտորել զարգամութիւն, զանապոյն, զանմերենայ, զուղղափառ գեղն հաւատոյն», և պատվիրում է՝ «զգոյշ լինիշիք»<sup>7</sup>:

Դժվար է պատկերացնել, թե քրիստոնեությունը պետական կրոն հոչակած երկրում աղանդավորներ չեն եղել: Եվ, իսկապես, Պրոկոփի թղթի սկիզբն արիստականության մասին է: Եվ քանի որ սա քրիստոնեական աշխարհին անհանգստություն պատճառած առաջին, թեև ոչ միակ աղանդն է, թերևս ենթադրելի է, թե Բերձվածները միայն V դարի սկզբներին

<sup>1</sup> «Թուղթ յԱկակիայ եպիսկոպոսէ ի Հայս», Գիրք թղթոց, Թիֆլիս, 1901, էջ 20:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 8:

<sup>3</sup> Նույն տեղում, էջ 15:

<sup>4</sup> Նույն տեղում, էջ 21:

<sup>5</sup> Նույն տեղում, էջ 10:

<sup>6</sup> Նույն տեղում, էջ 12:

<sup>7</sup> Նույն տեղում, էջ 7:

են թափանցել Հայաստան: Չմոռանանք, որ V դարի պատմիչներն առանձնապես անհամագույն չեն աղանդերի գոյությամբ. նրանց պատմություններից այն տպավորություններ են ստանում, թե ներձվածները սոսկ լոկալ երևույթներ են: Նովմիսկ Փավստոս Բուզանդը, որ մանրամամորեն ներկայացնում է արիոսական «ամիծեալ աղանդի» Ակատմամբ Վաղես կայսեր հովանավորչական քաղաքականությունը, միևնույն է, չունի այն տպագմապերը, որոնք պատում են նրան նեթանուական սովորույթներին հայերի հավատարմության մասին գործիս:

Նովմը տեսնում ենք Հովհան Մանդակունու ճառերում ու կանոններում: Հեթանոսական սովորույթների դեմ քարոզչության մեջ և կանոններում աղանդավորության մասին հիշատակումները հազվադեալ են, ավելին՝ «Վասն աղօթից» և այլ ճառերում քազմից թվարկում է այն մեղքերը, որոնց ենթարկվում են մարդիկ, և դրանց մեջ հավատից շեղվելու մեղքի մասին դարձյալ խոր չկա. «Զի՞նչ զործեսցուր յորժամ արտաքս եկեալ ի ծով մեղաց մտանցեանք, ի հրապարակս, ի վաճառս, յերդմունս, ի հայիոյութիւնս, ի զոկանս, ի քամբասանս, ի նախանձ, ի բարկութիւնս, ի զօշաքաղութիւնս, յարբեցութիւնս, յորկորսութիւնս, ի հսպարտութիւնս՝ ի յամենայն ախտից բազմութիւնս»<sup>8</sup>:

Չմոռանանք նաև, որ Հայաստանում նոր վարդապետությունը հասկանալի պետք է լիներ հիմնականում արքունիքի, նախարարական տների, մի խոսքով՝ կորթված, ասել է, թե՝ հունարենին, ասորերենին տիրապետող վերնախավի համար: Ժողովուրդն անհաղորդ էր մնում նոր վարդապետությանը հենց լեզվական անջրակետի պատճառով: Կորյունը, Փավստոս Բուզանդը սրանով ավելի են մտահոգված, քանի որ նեթանուական մտածողությունը, սովորույթները շարունակում են տիրապետող մնալ: Եվ, իսկապես, V դարի համար դեռևս նեթանուության և այլ կրոնների հաղթահարումն է խնդիրների խնդիրը և ոչ քրիստոնեության այլազան ընկալումների դեմ պայքարը: «Եղծ աղանդոցն» ել դրա վկայություններից է: Դարի հրամայականով գրված գիրքը հիմնականում ամփոփում է նեթանուության, պարսիկ կրոնի և հունական փիլիսոփայության ու կրոնների հերքումը: Մարկոսի աղանդի ժխտմանը նվիրված էքերը գրքի շուրջ մեկ վեցերորդ մասն են կազմում: Ուշագրավ փաստ է և այն, որ հենց մարկիոնականությունն է հերքում, Վ դարի առաջին կետում տարածված ուսմունքը, իսկ յոյսները, ասենք՝ արիոսականությունը, մեստորի եղծը և մյուսները, միայն պատմիչներից ումանց մոտ են հիշվում, այն էլ ոչ այնպիսի հետեւողականությամբ ու ամրողջական նկարագրով, ինչպես այդ տեսնում ենք Եզրիկ Կողբացու «Եղծ»-ում: Թե ինչու հատկապես մարկիոնականության դեմ է մարտնչում, հավամար իր բացատրությունը գտնում է նրանում, որ Մարկիոնը, փաստորեն, բազմաստվածություն էր ընդունում աղերավելով նեթանուությանը:

Այսպես, ուրեմն, դարի պահանջը, առաջնահերթ խնդիրը մերժումն է այլ կրոնների, որոնք աշխարհը բացատրում են «ըստ մարդկան աւանդութեան և ըստ տարերց աշխարհիս», ասել է, թե՝ «ոչ ըստ Յիսուսի Քրիստոսի»:

Ասվածը բոլորովին էլ չի նշանակում, թե աղանդերի դեմ պայքարը անտեսվել կամ երկրորդական պլան է մոլոր: Քրիստոնեական աշխարհը վրդոված առաջին աղանդի՝ ա-

<sup>8</sup> Տեառն Յովհաննու Մանդակումոյ Հայոց Հայրապետի Ծառք, 1836, Վեմետիկ, էջ 33:

րիոսականության մասին հիշում է Փավստոս Բուզանդը ևս՝ մանրամասնորեն ներկայացնելով Վաղես կայսեր քայլերն այս «անիծեալ աղանդը» Հայաստանում և տարածելու ուղղությամբ<sup>9</sup>: Հետաքրքիր մի դիտարկում է անում պատմիչը. արիոսականության հովանավոր կայսեր գործադրած բռնի միջոցների պատճառով կյանքն ավելի անկանոն դարձավ, քան նույնիսկ մեհենասեր թագավորների վարած պատերազմների ժամանակ<sup>10</sup>:

Աղանդի բնութագիրը, սեղմ ու հակիրճ, խորենացու գրչին է պատկանում. «Ընդ այն ժամանակու երևեցաւ Արիոս Աղեքսանդրացի, որ ուսուց չարաչար ամբարշտել, ոչ գոլ զՈրդի հաւասար Հօր, և ոչ ի բնութենէ և յԵութենէ Հօր. և ոչ ծնեալ ի Հօրէ յառաջ քան զյափուեանս, այլ օտար զոմն և արարած և կրտսեր, և յետ ժամանակի գոյացեալ»<sup>11</sup>:

Արիոսը, ըստ Մովսես Խորենացու, մերժում էր Ս. Երրորդությունը՝ ժխտելով Որդու աստվածային բնուվերը: Եթե վերջինս չի ծնվել Հորից և ընդամենը «արարած» է, ապա մերժվում է Ս. Հոգու գոյությունը ևս: Որդին ժամանակով էլ տարբեր է Հորից՝ «յետ ժամանակի գոյացեալ»: Հայերը մերժեցին արիոսականությունը՝ որդեգրելով Նիկի հանգանակը:

Հաջորդը բարբարիանու աղանդն է: Հետաքրքիր է, որ Մեսրոպ Մաշտոցը Թեոդոս կայսրից է հրաման ստանում «վասն ժամտագործ ազգին բարբարիանոսաց»: Այնքան անհանգստացնող մի քան չէր սա հայերի համար, որ կրթության գործը կազմակերպելուց և հունի մեջ գցելուց հետո միայն («ապա եւտ այնորիկ») ձեռնարկում է «զդապատեհ և զկամակոր բարբարիանու աղանդն քննելոյ»: Հորդորների, քարոզների, համոզելու միջոցները սպառելով հարկադրված դիմում է խիստ միջոցների. «առեալ ի գործ արկաներ զթշուառոցիշ գաւազանն, ծանրագոյն պատուհասիթ ի քանիս, ի տանջանս, ի գելարանս: Խսկ յորժամ այնու եւս պակասեալը ի փրկութենէն գտանէին, խորտակեալս, ապա խանձեալս, մրեալս և գունակ գունակ խայտառակեալս, և յաշխարհէն կորզէին»<sup>12</sup>:

Ընդհարձակ այս մեջբերումից կարելի է կոսմիկ, որ բարբարիանու կոչվող այս աղանդի թևուորդները բավականին համառել են իրենց մոլորության մեջ, մեծաթիվ չեն եղել, այլապես հնարավոր չեր լինի երկրից դուրս քշել երանց: Այս աղանդի մասին ստուգ ոչինչ հայտնի չէ. ենթադրություններ կամ, թե դա բորբոքիտոն աղանդի աղավաղված անվանումն է:

Այս աղանդը հիշում է Խորենացին ևս՝ բորբոքիտոններ հնչմամբ<sup>13</sup>:

Սահակ Պարթևը համձնարարում է Մեսրոպ Մաշտոցին «քննել զժամդագործ բորբոքիտոնն և եթէ ոչ նեզութեամբ և ոչ սաստիւ գայցեն յուղութիւմ՝ չարչարանօք հալածել.

<sup>9</sup> Փավստոս Բուզանդ, Պատմութիւն Հայոց, էջ 127-143:

<sup>10</sup> Նույն տեղում, էջ 142:

<sup>11</sup> Մովսես Խորենացի, Պատմութիւն Հայոց, էջ 292:

<sup>12</sup> Կորյուն, Վարք Մաշտոցի, Երևան, 1980, էջ 116:

<sup>13</sup> Բորբոքիտոն - բառարանները թարգմանում են վագաշոտ, ցամկասեր, անառակ, գարշ, պիղծ, Ստ. Մայնայանն ավելացնում է՝ կեշտ, ցեխ, աղբ: Բորբոքիտ բառն այս իմաստներով օգտագործում է Խորենացին:

Հիմնվելով այն փաստի վրա, որ Կորյունը մի տեղ հիշում է նաև «ժամտագործ ազգին բարբարոսաց», իսկ Խորենացին՝ «աղանդն եթեանոսական», Ստ. Մայնայանն ենթադրում է, թե «այստեղ խորը վերաբերում է Հայաստանուն դեռ տեղ-տեղ մնացած նեթանոսական պաշտամունքին, երբ տեղի էին ունենում պղծություններ», Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, Երևան, 1981, էջ 526:

զի որպէս թշնամիք ի թշնամեաց Վրէծ առնուցուն, և խայտառակեսի իրաւացի մահուամբ անիրաւ մար հոգուց»<sup>14:</sup>

Վկայությունը հետաքրքիր է նրանվ, որ Խորենացին էլ հավաստում է աղանդերի մակատմամբ ամենախիստ միջոցներ ձեռնարկելու պարագան: Երկրորդ՝ այս բորբորի համեմականին տարածված են եղել, քանի որ Մեսրոպ Մաշտոցը հիմնականում դարձի է բերում, մասամբ էլ հայածում աղանդավորներին Գոյթենում, Բաղասական կողմերում, Գարդմանա ձորի կողմերում, Գուգարքում, Տաշիր գավառում: Երրորդ՝ պարզվում է, որ իշխանները և հետևել են աղանդերին: Գարդմանի իշխանին էլ դարձի է բերում, «որում անուն էր Խոլը»<sup>15:</sup> Կարևոր է նաև Մովսես Խորենացու ընդհանրացումը, թե աղանդերը բուն զարգանում են «ի ժամանակի անհշխանութեանն»:

Մեր պատմիչները ժխտական դիրքորոշում են դրսուրեկ Շնատորականության հանդեպ ևս: Խորենացին շատ դիպուկ մկատում է, որ Շնատորականությունն էլ հետամուտ է Ս. Երրորդության դավանությունը փլուզելուն: Աղանդի հետևորդներն ընդունում էին իրարից տարբեր երկու որդի՝ ծնված Մարիամից և Հորից, «որով Երրորդութիւնն չորրորդութիւն լին»<sup>16:</sup> Մերժվում էր, այսպիսով, Սուրբ Երրորդության ումունքը, Մարիամը դադարում էր ատավածածին լինելոց: Արա թե ինչու Խորենացու անունով մեզ հասած դավանարանական թուրթը նվիրված է մեկ բնության խնդրի քննությանը՝ ըստ «աստուածային գրոց»:

Եփեսոսի ժողովում մերժվում է Շնատորականությունը, սա էլ հայտնի է Խորենացուն, նաև այն, որ Սահմակն ու Մեսրոպը չեն մասնակցել այդ ժողովին: Խրանց աշակերտներն են մասնակցել և ժողովի ընդունած վեց կանոնները բերել Հայաստան: Շնատորական-ներն իրենց գրքերով նոր էին հայտնվել Հայաստանում: Մովսես Խորենացին գիտի, որ այդ մասին Սահմակ Պարթևին ու Մեսրոպ Մաշտոցին հայտնում են Կյուրեղ Ալեքսանդրացին, Կ. Պոլսի Պատրիարք Պրոկոփ, ՄԵլիսինեի եպիսկոպոս Ակապը (Վերջին երկուսի թղթերը պահպանվել են): Համաձայն Խորենացու վկայության, Բիշյալ հայուերը թղթերը գրեցին Սահմակ Պարթևին ու Մեսրոպ Մաշտոցին, «քանզի լուան, եթէ ոմանք ի չարափառացն աշակերտաց առեալ զգիրսն Թէոդորոսի Մամունատացւոյ, զվարդապետին Նեստորի, և զաշակերտին Թէոդորի՝ գնացին յաշխարհն Հայոց»<sup>17:</sup>

Չարումակությունը հայտնի է «Գիրք թղթոց»-ից:

Աղանդերի դեմ պայքարը բուն դրսուրումներ պետք է ստանար հետագա դարերում:

<sup>14</sup> Նույն տեղում, էջ 420:

<sup>15</sup> Նույն տեղում, էջ 422:

<sup>16</sup> Նույն տեղում, էջ 424:

<sup>17</sup> Նույն տեղում, էջ 426: